թուականներին, Իրանի Շահնշահերի պատմութեան Նամականին գրող Ֆերդուսին, այդ շրջանի մէջ եղած բոլոր պարսիկ պատմագիրների հետ, հինգ դար թագաւորող տան՝ Արշակունիներին ուրացան ու մոռացան եւ գրեցին դրանց մասին — ոչինչ չեն գրել պարսիկ աւանդական պոէմաների մէջ եւ ոչինչ չգիտեն: Իրանի ժողովուրդը, նրա երկրագործ եւ հովուական աշխատաւորը մինչեւ վերջը ատեց Արշակունիներին, քանի որ սրանք պաշտպան հանդիսացան Իրանի եւ նրան միացած բոլոր երկրների կալուածները յափշտակող իշխանաւորներին, ազատական սպահներին, ընդդէմ հողագործ ժողովրդի:

Ինչպէս Իրանի ազնուականութիւնը, նոյնպէս Հայաստանի Նախարարութիւնը թեւ ու թիկունք հանդիսացան Արշակունի Պարթեւներին, եւ որպէս իրենց հարազատներին, այնպէս կապուեցան, որ դարից դար անվերջ Շահնշահի կամ Իմպերատոր Կայսրի դռնից իրենց հարազատ Պարթեւներից միայն թագաւոր էին ուզում եւ Պահլաւներից՝ նրանց հարազատ բարձակից տոհմից՝ Կաթողիկոս: Քանի քրիստոնէութիւնը չէր մտել, թագաւորն ինքն էր Հայաստանի Մովպետանց Մոգպետն ու ընդհանուր տէրը, իսկ քրիստոնէութիւնից յետոյ թագակիրները զոյգ դարձան—աշխարհական եւ կրօնական:

Այս պարագան մեզ ստիպում է աւելի